

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

**ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԵՐ**

2-րդ դասարան



ԷԴԻՏ ՊՐԻՆՏ



EDIT PRINT

**Երաշխավորվել է ՀՀ ԿԳ նախարարության
Կրթության ազգային ինստիտուտի կողմից**

**Կազմողներ՝ Աշոտ Գալստյան Լատրա Ավագյան
Ռոզա Խարազյան Ասողիկ Բալայան**


Գրախոս՝ Վալենտինա Կաժյան

*Ձեռնարկում զետեղված են ինքնուրույն ընթերցանության
ծրագրով նախատեսված նյութեր հանրակրթական դպրոցի
2-րդ դասարանի համար:*

Սիրելի՛ բարեկամ

Դու արդեն կարող ես կարդալ ու գրել: Կարդացածիցդ շատ բան սովորելու համար պետք է սիրով և ուշադիր կարդաս: Այստեղ դու կհանդիպես տարբեր հերոսների, կհմանաս նրանց լավ ու վատ արարքների մասին: Կարդալով հեքիաթներն ու առակները, պատմություններն ու բանաստեղծությունները, առած-ասացվածքները՝ դու կհմանաս շատ ու շատ բաներ: Ընկերներիդ հետ ուրախ և հետաքրքիր խաղեր, մրցույթներ կարող ես կազմակերպել խաղիկների, հանելուկների, շոտասելուկների, սուտասելուկների միջոցով: Օգտվիր նաև «Ճանաչիր կենդանիներին և թռչուններին» բաժնից, որը փոքրիկ հանրագիտարան է կենդանիների և թռչունների մասին:

Բնագրերը նախ պետք է կարդաս տանը և կատարես «Ինքնուրույն աշխատանք» բաժնի առաջադրանքները, այնուհետև դասարանում ուսուցչի և ընկերներիդ օգնությամբ քննարկես «Խմբային աշխատանքի» հարցերը: Այն հարցերն ու առաջադրանքները, որոնց կողքին կտեսնես

 նշանը, պետք է կատարես ընկերներիդ հետ՝ համագործակցա-
յին խմբերի բաժանվելով: Կան ստեղծագործություններ, որ ուսուցիչը կառաջարկի կարդալ և դրանց շուրջ աշխատել հենց դասարանում: Անձանոթ բառերի իմաստը հասկանալու համար դիմիր «Բառարան-մարդուկին»:

Պարտադիր չէ բնագրերը կարդալ տրված հաջորդականությամբ. դա կարելի է անել խառը ընտրությամբ՝ ուսուցչի հետ: Իհարկե, պետք է հաշվի առնել, թե մայրենիի ժամերին ինչ եք անցնում: Օրինակ՝ եթե ուսումնասիրում եք գարնանը նվիրված ստեղծագործություններ, ապա լավ կլինի կարդալ «Գարուն» բանաստեղծությունը, գարնան ավետաբերների մասին նյութերը: Ծավալուն բնագրերը կարող ես կարդալ և մշակել մասերով, որ շատ չդժվարանաս: Տրված առաջադրանքներից ոչ բոլորը դու կհասցնես կամ կկարողանաս կատարել: Չտխրես, քանի որ ուսուցիչը քեզ կուղղորդի ընտրության մեջ և կօգնի կատարել դրանք:

«Բանաստեղծությունների փունջ» բաժնից քեզ դուր եկած նյութերը կարդա՛ կամ արտասանիր ընտանիքիդ անդամների, ընկերներիդ համար կամ տպավորություններդ արտահայտիր գույների միջոցով:

Փորձիր նման բանաստեղծություններ էլ ինքդ հորինել:

Ուրախ եմ, որ հանդիպեցինք: Համոզված եմ, որ լավ բարեկամներ կլինենք... Քեզ հաջողություն եմ մաղթում...



Մայրենի լեզու

Ըստ Ս. Մուրադյանի

Քաղցրօրոր երգ է,
Մայրական ձեռք է
Ու հզոր զենք է
Մայրենի լեզուն:

Թոթով բալիկ է,
Լուսե գալիք է,
Շռայլ բարիք է
Մայրենի լեզուն:

Կապույտ Սևանն է,
Նոր Երևանն է,
Ողջ Հայաստանն է
Մայրենի լեզուն:



1997

Աղավնիներ

Հատ Լ. Սարգսյանի

Տղան, հացի կտորը ձեռքին,
վազեց դեպի աղավնիները,
փշրեց և արագ վերադարձավ
տատի մոտ: Աղավնիները ուրախ
դունդունացին*:

- Տատի՛կ, լավն են, չէ՛,-
խոսեց նա:

- Լավն են, գեղեցիկ են, Ար-
տաշեն ջան,- համաձայնեց տա-
տը:

- Իսկ այդ ձնձղուկները որտե-
ղի՞ց եկան,- բարկացավ Արտաշեսը:
Ձնձղուկները մի քիչ անհամարձակ,
բայց ձարակորեն հավաքում էին աղավնիների

համար թափած հացի փշուրները:

- Քը՛շշ,- կանչեց տղան՝ մոտենալով ձնձղուկներին:

Նրանք վայրկենապես թռան մոտիկ ծառերին: Աղավնիները շփոթված
նայեցին տղային:

- Ոչինչ, թող ձնձղուկներն էլ ուտեն,- խոսեց տատը,- նրանք էլ են
քաղցած:

- Չէ՛,- խռովեց Արտաշեսը,- ես նրանց համար չեմ փշրել:

Տատը լռեց՝ չիմանալով ինչպես լեզու գտնել* չարածձի թռռնիկի հետ:

- Ախր, տեն է, տատի՛,- խոսեց նա,- այնպես էլ համարձակ են ուտում,
կարծես հենց իրենց են հրավիրել ճաշկերույթի: Իսկ աղավնիները...

Արտաշեսը վրդովված նայեց աղավնիների կողմը:

- Ա՛յ տատ, նայի՛ր, երեք ձնձղուկի չափ են ու կարծես վախենում են
դրանցից: Ի՛նչ է, չե՛ն կարող կտցահարել* ու հեռու փախցնել:

Տատիկը ժպտաց.

- Ախր, Արտաշեն ջան, երևի նրանք էլ են հասկանում, որ ձնձղուկները
քաղցած են... Համ էլ, բա մարդ իրենից փոքրին կհալածի՞,- փորձեց թռռնիկին
մեղմացնել տատը...

Ձնձղուկները թռել էին ծառերին: Երևի աղավնիների համար փշրած հացը

վերջացել էր: Աղավնիները տոտիկ-տոտիկ քայլում էին: Արտաշեսը տատի ձեռքից վերցրեց հացի վերջին կտորը և մոտեցավ, որ....



Ղունդունալ - աղավնու՝ դու-դու ծայն հանել:
Լեզու գտնել - իրար հասկանալ, համերաշխ լինել:
Կտցահարել - կտուցով խփել՝ զարկել, հարվածել:

Ինքնուրույն աշխատանք

1. Ո՞ր թռչունի մասին են նախադասությունները. գծով միացրո՛ւ:

Հնում օգտագործել են որպես կապի միջոց՝ նամակատար:

Զվող թռչուն չէ:



Ցատկոտում է:

Ղունդունում է:



Խորհրդանշում է խաղաղություն:

2. Բնագրի մտքերը նշիր V-ով:

Աղավնիները ուրախացան՝ հացի փշրանքները տեսնելով:

Արտաշեսին դուր չեկան աղավնիները:

Ճնճողուկները ծարակորեն հավաքում էին հացի փշուրները:

Աղավնիները փոքր են ճնճողուկներից:

Աղավնիները քայլում են տոտիկ-տոտիկ:

Խմբային աշխատանք

1. Տատիկը լեզու գտնում էր թռչունիկի հետ:

2. Դուք ի՞նչ եք կարծում, մարդ իրենից փոքրին կհավածի՞...

3. «Արտաշեսը տատի ձեռքից վերցրեց հացի վերջին կտորը և մոտեցավ, որ...»: Ի՞նչ եղավ հետո: Ավարտե՛ք պատմությունը:

Տոհմածառ

Գ. Գևորգյան

Մի թղթի վրա
Նորայրը կայտառ
Մատիտով կանաչ
Նկարեց մի ծառ,
Իսկ ծառի վրա՝
Խնձորներ լիքը
Ու տակն էլ գրեց.
«Մեր ընտանիքը»:



Եվ ասաց պապին
Նա շատ լրջորեն.
- Այս ծառը դու ես,
Խնձորները՝ մենք:

Ինքնուրույն աշխատանք

1. Կազմիր քո տոհմածառը: Քեզ կօգնեն ծնողներդ:

2. Փակցրո՛ւ՝ ընտանիքիդ անդամների լուսանկարները:

Խնդրային աշխատանք



1. Միմյանց պատմե՛ք ձեր ընտանիքների մասին:
2. Դասարանին ներկայացրե՛ք՝ ինչ հետաքրքիր բան իմացաք ձեր ընկերների ընտանիքների մասին:

Փոստատար աղավնին

Ըստ Ջ. Պետրոսյանի

Գյուղում լռություն էր տիրում: Արդեն քանի գիշեր է, ինչ աղավնապահ* Վահրամը, հրացանը կրծքին սեղմած, գալիս ու նստում է իր տան ավերակների մեջ՝ հույսով, որ որևէ լուր կստանա իր հարազատներից:

Երկու օր առաջ թուրքերը հարձակվեցին քնած գյուղի վրա: Վահրամը մի խունք հայ տղամարդկանց հետ կարողացավ կանանց ու երեխաներին հեռացնել գյուղից: Վերջին պահին միակ բանը, որ կարողացավ տալ կնոջը, փոքրիկ սև տոպրակն էր, որի մեջ դրել էր իր ամենասիրելի աղավնուն:



Նա ամեն գիշեր գալիս էր այդտեղ և սպասում մինչև լուսաբաց: Վահրամը աչքերը լայն բացած, նստել էր՝ փորձելով զսպել քունը: Ժամերն անցնում էին...

Բացվեց առավոտը: Հանկարծ անմիջապես իր գլխավերևում Վահրամը լսեց իրեն շատ ծանոթ ու հարազատ թափահարվող թևերի ձայնը: Նա կանաց սուլեց, բարձրացրեց ձեռքը: Աղավնին անձայն նստեց նրա ձեռքին: Վահրամը տեսավ աղավնու ոտքից կախված փոքրիկ նամակը: Նա դողդոջուն* ձեռքերով բացեց թղթի կտորն ու սկսեց կարդալ. «Ես երեխաների հետ գտնվում եմ ապահով վայրում»:

Վահրամը, արցունքն աչքերին, կրծքին սեղմեց նամակը և համբույրներով ծածկեց փոստատար աղավնուն:



Աղավնապահ – աղավնի պահող:
Դողդոջուն – դողդողացող: